ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՐԱՎԵՐ
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

Ծրագրի մասին: ՀՏԶՀ/ԱՄՆ ՄԶԳ Տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման բարեփոխումների ծրագիր
Ծրագրի գնումների խորհրդատուի ընտրություն
USAID-14/24

Ծրագրի նկարագրությունը

«Տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման բարեփոխումների» ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ կառավարության կողմից և իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից:
Դրամաշնորհը տրամադրվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ՏԻՄ համակարգի հզորացման, համայնքային ծառայությունների բարելավման և կառավարության ապակենտրոնացման քաղաքականությանն աջակցելու նպատակով:
Ծրագիրը մեկնարկել է 2022թ. դեկտեմբերի 1-ին և նախատեսվում է ավարտին հասցնել 2027թ. նոյեմբերի 30-ին: Այն բաղկացած է 4 բաղադրիչից՝

Կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրի գործունեության ժամկետը կսահմանվի 3 ամիս տևողությամբ՝ երկարաձգման հնարավորությամբ:

- **Բաղադրիչ 1. Ուսուցում, կարողությունների զարգացում և տեխնիկական աջակցություն հաշվետու կառավարման համար**

ՏԻՄ ներկայացուցիչներին և ինստիտուտներին կտրամադրվի տեխնիկական աջակցություն կամ ուսուցում՝ համայնքային կարողությունների և հանրային կառավարման հաշվետվողականության բարելավման նպատակով:

- **Բաղադրիչ 2. Քաղաքացիների կարիքներին արձագանքող հանրային ծառայություններ և համայնքների զարգացման նախաձեռնություններ**

Աջակցություն քաղաքացիներին մատուցվող հանրային ծառայությունների բարելավմանն և համայնքային զարգացման նախաձեռնությունների իրականացմանը:

- **Բաղադրիչ 3. Չնախատեսված սթրեսածին գործոնների և ցնցումների արդյունավետ արձագանքում և վերականգնում**

Աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին՝ արագ և արդյունավետ արձագանքելու արտակարգ վիճակներից տուժած բնակչությանը և վերականգնողական աջակցություն ցուցաբերելու բնակչության այն խմբերին, որոնք հայտնվել են նման իրավիճակում:

- **Բաղադրիչ 4. Ապակենտրոնացման քաղաքականությունը, օրենսդրական դաշտի բարելավում և ապակենտրոնացման սկզբունքի փորձարկում**

Օժանդակություն Հայաստանի կառավարությանը՝ մշակելու ու իրականացնելու ապակենտրոնացման քաղաքականությունը, որը կարող է ներառել քննարկումներ միջգերատեսչական պետական, մարզային և համայնքային մակարդակներում, ապակենտրոնացման միջազգային փորձի ուսումնասիրություն, օրենսդրության և

քաղաքականության մշակում, ապակենտրոնացման մոդելների փորձարկում, ինչպես նաև ապակենտրոնացման հարցերի հետ կապված հանրային իրազեկում և ռազմավարական հաղորդակցություն:

Խորհրդատուի գործունեության շրջանակները

Գնումների խորհրդատուն պատասխանատու է ՀՏՋՀ ծրագրերի հետ կապված հաղորդակցության, դրանց լուսաբանման, հրապարակայնության կազմակերպման և ապահովման համար:

Աշխատանքային պարտականությունները ներառում, սակայն չեն սահմանափակվում հետևյալ կետերով.

- Գործուն մասնակցություն մրցույթների տեխնիկական առաջադրանքների կազմմանը:
- Մրցութային փաթեթների կազմում:
- Հրավերների ուղարկում կամ հրապարակում (www.procurement.am, www.armeps.am, www.atdf.am):
- Գնահատման հաշվետվությունների կազմում (գնահատող հանձնաժողովի կազմում հանդես գալով որպես հանձնաժողովի քարտուղար):
- Գնումների արդյունքների նախապատրաստում ԱՄՆ ՄԶԳ ուղարկելու համար (անհրաժեշտ նյութերի պատճենահանում, փաստաթղթերի կազմում, ուղեկցող նամակների նախապատրաստում):
- Պայմանագրի կազմում:
- Կնքված պայմանագրերի մասին ինֆորմացիայի հրապարակում (www.procurement.am, www.atdf.am կայքէջերում):
- Հաշվետվությունների կազմում:
- Տարեկան գնումների պլանի կազմում:
- ԿՏՀ-ում խորհրդատվական ծառայությունների, շինաշխատանքների և ապրանքների գնմանը վերաբերող ողջ տեղեկատվության մուտքագրում:
- Գնման ընթացքի մասին գնումների բաժնի պետին զեկուցում:
- Ծրագրերի շրջանակներում ապրանքների գրանցման համապատասխան լիազորագրերի կազմում:
- Ծրագրերի շրջանակներում ապրանքների նպատակային նվիրաբերության պայմանագրերի և դրանց փոփոխությունների կազմում:

Որակավորում

- Տնտեսագիտության, ֆինանսների, վարչարարության, մարքեթինգի, հանրային կառավարման, և հարակից ոլորտների բարձրագույն կրթություն (դիպլոմ կամ մագիստրոսի աստիճան),
- Գնումների ոլորտի նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ,
- Գնումների միջազգային ընթացակարգերի տիրապետում (USAID, WB, ADB, EBRD կամ այլ),
- Անգլերեն լեզվի գերազանց իմացություն:

Հետաքրքրված խորհրդատուն պետք է ներկայացնի տվյալներ իր կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ (CV), որակավորումը հիմնավորող փաստաթղթեր և անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի “Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում” սահմանված «Անհատ Խորհրդատուի ընտրության» ընթացակարգի համաձայն:

Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏԶՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:
Փաստաթղթեր պետք է ներկայացվեն էլ-փոստով՝ l.sedrakyan@atdf.am, procurement.atdf@gmail.com , կամ առձեռն, ոչ ուշ քան **2024թ. հոկտեմբերի 9-ը, ժամը 17:00**:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,
ՀՀ, ք.Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, ՀՏԶՀ գրասենյակ,
Գնումների վարչություն
Հեռախոսը՝ (374 60) 50-15-60: